



ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

355.331(47.925 Ղիմյարջան)

Ք.52

Վ. ԹԵՐԶԻԲԱՇԹԱՆ

ԵՅՈՒԳՎԱՄ Է 1961 Թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
Հ Ե Ր Ո Ս  
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ  
ԱՆԴՐԱՆԻԿ  
Ղ Ա Ջ Ա Ր Յ Ա Ն

44  
2082  
2592



ՀՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն


1944

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ Ա Ն Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ

Պ ա ճ. խմբագիր՝ Խ. ՄՈՄՉԵԱՆ

Շաղկիք՝ Եկարիչ Մ. Ն. ՄՈՒՆԻ

A  $\frac{1}{1823}$



~~2175~~





Սովետական ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմի հերոսների թվին է պատկանում հայ ժողովրդի պանծալի զավակ, Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը: Նրա ղեկավարութամբ գործող 74-րդ հրաձգային ղիվիզիան աչքի ընկավ Դեսնա գետը գրոհով անցնելու ժամանակ և նշվեց Գերազույն Գլխավոր Հրամանատարի 1943 թվի սեպտեմբեր 16-ի Հրամանում: Մարտական այդ գործողութունները հաջողութամբ և արիարար ղեկավարելու համար գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը պարգևատրվեց Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով:

Նույն թվի հոկտեմբերի 16-ին գեներալ-մայոր Ղազարյանն արժանացավ Սովետական Միության Հերոսի բարձր կոչմանը Դենպր գետն անցնելիս ցույց տված արիության և հերոսության համար:



Անդրանիկ Ղազարյանը ծնվել է 1904 թվին Բաքվում՝ շուշեցի գերձակ Աբրահամի ընտանիքում: Մորից նա գրկվեց, երբ հագիվ երեք տարեկան էր: Մանկության հիշողությունները լի են դառնությամբ: Համարյա որք Անդրանիկը մեծացել և դաստիարակվել է ազգականների խնամքի տակ: Նա սկսում է դպրոց հաճախել միայն տասն տարեկան հասակում: Ընդամենը չորս տարի է տևում Անդրանիկի ուսումը քաղաքային յոթնամյա դպրոցում: Միաժամանակ նա հետևում է արհեստի:

1920 թվին մեռնում է գերձակ Աբրահամ Ղազարյանը: Անդրանիկը նորից մնում է որք ու անապաստան, 16-ամյա պատանու համար դա ծանր հարված էր: Անդրանիկը միանում է փախուտականների կարավանին և բռնում Հայաստանի ճանապարհը. ցուրտ ձմռանը Ջանգեղուրի, Գարալագյազի լեռներով մի կերպ հասնում է

Յրևան՝ հյուճված, ուժասպառ: Այն ժամա-  
նակ արդեն Հայաստանի վրա ծածանվում  
էր Սովետների հաղթական դրոշը: Անդրա-  
նիկին ընդունում և ապաստան է տալիս  
Հայկական Կարմիր Բանակի ռազիո-գորա-  
մասը որպես սանի:

Շուտով Անդրանիկը գտնում է իր  
մորեղբորը՝ ուսուցիչ Ռուբեն Հովհաննիսյա-  
նին, իր միակ կենդանի մնացած հարազա-  
տին, որին նա չէր տեսել 1915 թվից:

Անդրանիկը գտնում է իր հանգըր-  
վանը հարազատ ժողովրդի ծոցում, մոր-  
եղբոր խնամքի տակ, որի գուրգուրանքը  
նա չի մոռացել մինչև այսօր: Ծնողազուրկ  
պատանին մի բուռն ձգտում ուներ—մտնել  
գինվորական ծառայության: Արդյոք ի՞նչն  
էր մղում նրան դեպի այդ ասպարեզը—ազ-  
մական փառքը, թե՞ անարդարությունների  
ու բռնության դեմ պայքարելու, այդքան  
աղետների և ավերների համար վրեժխն-  
դիր լինելու փափագը:

Եվ ահա մենք տեսնում ենք նրան Յրե-  
վանի զորամասերից մեկի շտաբում որպես

ցրիչ: Նա իր ռազմական փայլուն ասպարեզն սկսում է ամենահամեստ և աննշան պաշտոնից: Սակայն պատանու հոգում արծարծվում էր տաղադրամության կայծը. նա աշխատում էր համառորեն, կարգում էր և շարունակ մտածում իր տպագրայի մասին: Մի օր նա վճռեց դիմում տալ և ընդունվել Երևանի հրամանատարական դպրոցը: Սակայն անհրաժեշտ էր որոշ քննություն բռնել կարմիր հրամանատարներ պատրաստող ուսումնական հաստատության մեջ տեղ գրավելու համար: Համառ աշխատանքով և ինքնակրթությամբ Անդրանիկին հաջողվեց մտնել հրամանատարական դըպրոցը 1923 թվին:

Ռազմական դպրոցի դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո նա նշանակվեց դասակի հրամանատարի օգնական Հայկական դիվիզիայի զորամասերից մեկում: Սակայն ստացած ռազմական կրթությունը չէր բավարարում երիտասարդ, ընդունակ հրամանատարին: Բախտը ժպտաց նրան, և Անդրանիկին բեղաբերեցին թբի-

լիսի՝ ռազմական ավելի բարձր դպրոց, որ տեղ նա ստացավ ռազմա-քաղաքական պատրաստություն: 1927 թվին Անդրանիկ Ղազարյանը նշանակվեց վաշտի հրամանատար և քաղաքական ղեկավար: Ռազմական մաներների ժամանակ վաշտապետ Ղազարյանն աչքի ընկավ իր զորամասի մարտիկների տոկունությամբ, ռազմական և քաղաքական լավ պատրաստությամբ: Երիտասարդ հրամանատարն առանձին ուշադրություն էր դարձնում սպորտի—ֆիզիկական կուլտուրայի վրա և կոփում էր իրեն ու իր մարտիկներին: Փուտրոլի մրցումներին նա միշտ գրավում էր առաջնակարգ տեղերից մեկը:

Ֆիզիկական դաստիարակությունը հրակայական նշանակություն ունեցավ մարտիկների ռազմական պատրաստությունը կատարելագործելու համար: Ահա թե ինչու հրամանատար Ղազարյանն իր զբաղմունքների մեջ հատուկ տեղ էր հատկացնում ֆիզիկուլտուրայի գործնական և տեսական հարցերին:

«Որքան շատ քրտինք վարժության ժա-  
 մանակ, այնքան քիչ արյուն՝ մարտում»:  
 Եվ Անդրանիկ Ղազարյանը խստությամբ  
 հետևում էր ռազմական այդ իմաստուն  
 սկզբունքին: Նա ինքն օրինակ էր հան-  
 դիսանում կրթերի ժամանակ շարքա-  
 յինների հետ համահավասար, կրելով ռազ-  
 մական լրիվ հանդերձանք և սպառազի-  
 նություն, հետիոտն անցնելով մեծ տարա-  
 ծություններ, վարժեցնելով իրեն ու իր  
 մարտիկներին տոկունության և զիմաց-  
 կունության: Որպես խստապահանջ հրա-  
 մանատար, նա աչալուրջ հսկում էր իր  
 մարտիկների ռազմական կարգապահության  
 և վարքի վրա: Նա ամեն առավոտ ստու-  
 գում էր իր զորամասը, յուրաքանչյուր մար-  
 տիկի ռազմական պատրաստության աստի-  
 ճանը, օգնում էր ետ մնացողներին՝ հասնելու  
 առաջավորներին: Ռազմական տակտիկայի  
 հետ միասին նա անդուլ կերպով ուսումնա-  
 սիրում էր ռազմական տեխնիկան, զենքի  
 բոլոր տեսակները, չբավականանալով միայն  
 հետևակային զենքով: Իր ժրաջանության,

համառ աշխատանքի շնորհիվ ընկեր Ազգա-  
բյանը գրավեց բարձր հրամանատարության  
ուշադրությունը: Մի քանի տարվա ընթաց-  
քում նա ստացավ պաշտոնի բարձրացումներ  
և նշանակվեց Հայկական դիվիզիայի շտաբի  
4-րդ բաժնի պետ, այնուհետև հրաձգային  
գնդի շտաբի պետ և գնդի հրամանատար  
մինչև 1937 թիվը:

Այդ շրջանի նրա աշխատանքի, նրա ան-  
սպառ եռանդի, համեստ, ընկերական բնա-  
վորության մասին են խոսում նրա բոլոր  
դինակիցները—մայրը Զաքարյանը, կապի-  
տան Քրմոյանը և ուրիշները, որոնք երկար  
տարիներ աշխատել են նրա հետ Հայկա-  
կան դիվիզիայում:

Սակայն մի առժամանակ նա ստիպված  
էր թողնել անմիջական ծառայությունը  
զորամասում: 1938—39 թ. թ. ուսումնական  
տարում, այդ ժամանակ արդեն մայրի  
կոչում ստացած ընկեր Ազգաբյանը նշա-  
նակվում է ոչ նվազ պատվավոր մի պաշ-  
տոնի—նա զբաղվում է Հայաստանի Պետ-  
համալսարանի ռազմական ամբիոնը որպես

ամբիոնի վարիչ և դասախոս: Պետհամալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմը և այդ շրջանի ուսանողությունը մեծ գովեստով են խոսում Անդրանիկ Ղազարյանի մասին, որպես լավագույն ուղղական դեկավարի, որ Համալսարանն ունեցել է երբևե: Եվ երբ 1939 թվի սեպտեմբերին Կարմիր Բանակի բարձր Հրամանատարությունը կրկին կանչեց նրան ուղղական ծառայության, Պետհամալսարանը ափսոսանքով բաժանվեց իր ուղղական հմուտ և եռանդուն դեկավարից: Սակայն հայրենիքը նրա կարիքն ունեւր երկրի պաշտպանության ավելի կարևոր պոստում:

Սովետական Միությունը գտնվում էր մեծ իրադարձությունների նախօրյակին. հրամանատարական կոփված կազրերը ծառայության էին կանչվում պատրաստվելու գալիք մարտերի համար: Մայր Անդրանիկ Ղազարյանը նշանակվեց Կուլբիշևի ՊԱՁԸ-Ավիաքիմի մարզային խորհրդի նախագահ: Այդ պաշտոնում նա մնաց մինչև Հայրենական պատերազմի սկիզբը: 1941 թ.

օգոստոսին մայր Անդրանիկ Ղազարյանն  
իր զորամասի հետ մեկնեց ռազմաճակատ:  
Նույն ամսին Խարկովից գրած նամակում  
նա հաղորդում է լակոնական ոճով. «Ես  
արդեն անցել եմ առաջին գիծը»:

Կատաղի մարտեր էին ծավալվում Ուկ-  
րաինայի տափաստաններում:



Մայր Անդրանիկ Ղազարյանի գունդը  
թշնամու հետ առաջին անգամ հանդիպում  
ունեցավ 1941 թվի օգոստոսի 15-ին: Գուն-  
դը բաղկացած էր մեծ մասամբ Դոնբասի  
բանվորներից: Սովետական հայրենիքի հու-  
մար ծանր օրեր էին: Անդրանիկ Ղազար-  
յանի առջև խնդիր էր դրված ինչ գնով էլ  
լինի պաշտպանել Դնեպրի կամուրջներից  
մեկը, որով պետք է անցնեին նահանջող  
սովետական զորքերը: Երեք օր անընդհատ  
կատաղի մարտեր մղելով թշնամու գերա-  
կշռող ուժերի դեմ, Ղազարյանի գնդին հա-  
ջողվեց պահել կամուրջը: Չորրորդ օրը նա  
անցավ հակազրոհի և պայթեցնել տվեց

կամուրջը: Հակառակորդը 5—6 օր չկարողացավ անցնել Դնեպրն այդ ճակատամասում:

Երբ սովետական զորատասերն անցան Դնեպրի արևելյան ափը և նոր դիրքեր գրավեցին, գետի բազմաթիվ կղզիներից մեկի զինապահեստներում մնաց հսկայական քանակությամբ վառոդ: Մայր Անդրանիկ Ղազարյանի մարտիկները երկու օր շարունակ համառ կռիվներ մղեցին այդ կղզու համար և վերջիվերջո կարողացան պայթեցնել զինապահեստները, որպեսզի դրանք չանցնեն թշնամու ձեռքը:

1941 թվի սեպտեմբեր ամսին Անդրանիկ Ղազարյանի գունդն արյունահեղ մարտեր մղեց Փաշխատական հորդանների դեմ ուկրաինական մի մեծ քաղաքի փողոցներում: Մարտերը տևեցին 13 օր: Սակայն սովետական զորքերն ստիպված էին թողնել այդ քաղաքը: Մարտերը տեղի էին ունենում քաղաքի ծայրամասերում: Թշնամու տանկերը և հրետանին կրակի տարափ էին տեղում սովետական մարտիկներին վրա:

Բայց Անդրանիկ Ղազարյանի քաջերը  
նոնակներով կովում էին զրահապատ հրեշ-  
ների դեմ: Երբ թշնամու տանկերից ութը  
խփվեցին, նրանց շարասյունը կանգ առավ:  
Մերոնք խրամատավորվեցին և շարունա-  
կեցին հերոսաբար ետ մղել թշնամու կա-  
տաղի դրոհները: Սակայն հակառակորդի  
ուժերը զերակշռում էին: Այդ օրերին մայր  
Անդրանիկ Ղազարյանին վիճակվեց մաս-  
նակցել և ականատես լինել այնպիսի դըր-  
վագների, որոնց նկարագրությունը վեր է  
խոսքի և գրչի ուժից: Կարմիր Բանակի  
զարամասերը հարկադրված էին այդ ժամա-  
նակ թշնամուն թողնել մեր հարազատ  
գյուղերից և քաղաքներից շատերը: Կար-  
միր մարտիկների սրտից արյուն էր հոսում,  
բայց նրանք պետք է կատարեին զին-  
վորական հրամանը— ժամանակավորապես  
թողնել մեր տերիտորիայի մի մասը՝ թշնամու  
կենդանի ուժերը և տեխնիկան ոչնչացնելու  
համար:

Եվ ահա, Անդրանիկ Ղազարյանին վիճակ-  
վեց թշնամուն թողնել սովետական մի

մեծ քաղաք՝ պատմական Դնեպրի ափին։ Այդ օրը նա իր կյանքում երբեք չի մոռոնա։ Նա վճռեց ամենավերջինը հեռանալ քաղաքից։ Մարտերը շարունակվում էին արևմտյան ծայրամասում, սովետական զորքերն արդեն հեռացել էին։ Ղաղարյանը չորս ուես մարտիկների հետ միասին պատրաստվում էր նույնպես թողնել քաղաքը, երբ գերմանական ավտոմատավորները նկատեցին նրանց ընդամենը 50 մետր հեռավորության վրա։ Փաշիստական ավտոմատավորներից մեկը հրդեհի հրացուլքի լույսով տեսավ սովետական հրամանատարին և նրան ուղեկցող կարմիրբանակայիններին։ Լավեց մի կրակահերթ։ Ղաղարյանի մարտիկներից երեքն սպանվեցին, իսկ ինքը վիրավորվեց երեք տեղից և ընկավ ուշագնաց։ Չորրորդ մարտիկը կարծելով, որ գնդի հրամանատարն սպանված է, թողեց ու անհետացավ խավարի մեջ։

Երբ ուշքի եկավ, Անդրանիկը գտավ իրեն Դնեպրի ափին, գլուխը սառը ջրի մեջ։

ըստ երևութի նա մոտեցել էր գետին իրեն այրող ծարավը հագեցնելու համար:

Այդպես անցան ժամեր: Հանկարծ նա լսեց ուռսերեն խոսակցության ձայներ: Այդ Ղաղարյանի զորամասի մարտիկներն էին, որոնք 7—8 հոգով վերադարձել էին տանելու գնդի հրամանատարի «գիակը»:

Թշնամին արդեն անցել էր նրանց վրայով և խորացել 15—20 կիլոմետր: Սովետական այդ մի բուռը քաջերը գտնվում էին նրա թիկունքում: Անդրանիկը ձայն սովից: Մարտիկները ճանաչեցին նրան և չափազանց ուրախացան, տեսնելով, որ իրենց հրամանատարը կենդանի է: Նրանք վերցրին Անդրանիկին ձեռների վրա և վճռեցին ինչ գնով էլ լինի հասցնել նրան մինչև զորամաս: Բայց ի՞նչպես: Հանկարծ պատահեց այն, ինչ սովորական պայմաններում կարող է «հրաշք» կամ արկածային վեպի դրվագ համարվել:

Գիշեր էր: Խճուղու վրա երևաց մի բեռնատար մեքենա, դա ֆաշիստական ավտոմո-

A 1823

2002



բիւ էր: Երբ մոտեցաւ, սովետական մարտիկները նկատեցին նրա մեջ նստած 6—7 գերմանացի ավտոմատավորներ: Մի միտք կայծակի նման փայլատակեց ոռւս քաջարի մարտիկներին պիտու: Նրանք նշաններով կանգնեցրին գերմանական ավտոմոբիլը: Շոֆերը կարծեց, որ իրենցից են. մերոնք նրան խեղդեցին հենց ղեկի մոտ, մյուս հիտլերականները շժած դես ու դեն ընկան: Մաքրելով նրանց հաշիվը ևս, Ղազարյանի մարտիկները, որոնցից մեկը շոֆերություն գիտեր, իրենց հրամանատարի հետ միասին գերմանական մեքենայով սլացան դեպի արևելք, թշնամու գիրքերի միջով:

Այդ գիշեր Անդրանիկ Ղազարյանը ծնվեց երկրորդ անգամ: Նրա կյանքը փրկեցին ոռւս ժողովրդի քաջարի որդիները, իրենց սեփական կյանքը վտանգի ենթարկելով: Դա սովետական մարտիկներին դեպի իրենց հրամանատարն ունեցած սիրտ և հավատարմության, ինչպես և սովետական ժողովուրդների եղբայրության ամենավառ ապացույց-

ներից մեկն է, որ երբեք չեն կարող հասկանալ հիտլերյան ճիվաղները:

Հիշելով իր կյանքի համար վճռական նշանակութուն ունեցող այդ դրվագը, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանն ակամա մտաբերում է մի խոսակցութուն, որ նա ունեցել է 1941 թվի վերջերին մեր ձեռքը գերի ընկած գերմանացի մի գնդապետի հետ: Այդ ժամանակ հիտլերականներն իրենց պահում էին գոռոզ և անբարտավան՝ նույնիսկ գերի վիճակում: Հիմա նրանք այլ են, կարծիր Բանակի հուժկու հարվածների տակ թափվել է նրանց փետուրը:

Գերմանական այդ գերի գնդապետին բերին այդ ժամանակ դեռևս մայոր Ղազարյանի ըլինդաժը: Մայորը ճաշում էր, նա առաջարկեց գերմանացուն նստել և մասնակցել ճաշին: Հիտլերականը չհրաժարվեց: Հանկարծ նա դարձավ դեպի սովետական հրամանատարը և հարցրեց.

— Դուք ի՞նչ ազգից եք:

— Ռուս եմ, — պատասխանեց Անդրանիկը:

—Ո՛չ, դուք ոուս չեք, այլ կովկասցի, ես  
եղել եմ այդ գեղեցիկ երկրում,—ասաց գեր-  
մանական գնդապետը:

—Այո, կովկասցի եմ, ազրբեջանցի,—  
պատասխանեց Ղազարյանը:

—Ո՛չ, դուք հայ եք կամ վրացի:

—Այո, հայ եմ, ի՞նչ եք ուզում,—խո-  
սեց սովետական հրամանատարը արդեն  
ձանձրացած այդ «հարցաքննությունից»:

—Դուք գիտե՞ք, որ Անդրկովկասը շուտով  
լինելու է վտանգի տակ մեր զորքերի  
առաջխաղացման հետևանքով,—շարունա-  
կեց հիտլերականը,—եթե դուք իսկական  
հայրենասեր եք, ինչո՞ւ չեք գնում պաշտպա-  
նելու ձեր սեփական հայրենիքը—Հայաս-  
տանը:

Այս անգամ սովետական հրամանատարի  
պատասխանը եղավ կարճ և պատկերավոր,  
ավելի շուտ մի ֆորմուլայի ձևով, որ լի-  
ովին հասկանալի է միայն սովետական  
մարդուն.

—Այո, իմ հայրենիքը վտանգի տակ է,  
դրա համար էլ ես Հայաստանը պաշտպա-

նուժ եմ Ուկրաինայում, — հասկացե՛ք, եթե  
կարող եք:

Հազիվ թե տխմար ֆաշիստի գլուխը  
մտնէր մեզ համար շատ պարզ հայրենա-  
սիրութեան այդ պատկերավոր ֆորմուլան,  
որը խտացնում է սովետական ազատ ժո-  
ղովուրդների ստալինյան բարեկամութեան  
գաղափարը:

Իրենց սիրելի հայ հրամանատարին ուս-  
մարտիկներն ապահով հասցրին զորամաս —  
սանիտարական դումարտակը: Շուտով Անդ-  
րանիկին մեքենայով ուղարկեցին Գեոր-  
գևսի. այստեղ հոսպիտալում ծանր վիրավոր  
հրամանատարը գտավ վերին աստիճանի  
ուշադիր վերաբերմունք և հոգատարութիւն:  
Տեղացի հայերն այցելում էին հայրենակից  
հրամանատարին և նվերներով ու խնամքով  
շրջապատում նրան: Երբ մի փոքր ապա-  
քինվեց, նա խնդրեց իրեն ուղարկել Երևան՝  
ազգականների մոտ բուժումն ավարտելու  
համար: Ոտքի, թևի և ուսի վերքերը լա-  
վացել էին, միայն մնացել էր թիամեջքի  
գնդակը, որը հանելու համար պահանջվում

էր լուրջ օպերացիա: Սակայն սովետական հմուտ վիրաբուժներն այնպես հանեցին այդ դնդակը, որ ինքն էլ չիմացավ՝ առանց թըմբեցնելու, միայն վիրավորին դբադեցնելով խոսակցությամբ:

Երևանում փոխգնդապետ Ղազարյանը մնաց մինչև 1941 թ. դեկտեմբերի 10-ը: Սակայն մարտերում կոփված սովետական հրամանատարը ձգտում էր դեպի ռազմաճակատ: «Հանգստանալու ժամանակ չէ, —ասում էր նա բարեկամներին,—պետք է շտապել այնտեղ, ուր որոշվում է մեր երկրի բախտը»:

Մեր Հայրենիքի համար ահեղ օրեր էին, սովետական հերոսական ժողովուրդը և պանծալի Կարմիր Բանակը դյուցազնական արիությամբ պաշտպանում էին հայրենի հողի ամեն մի մետրը:

Փոխգնդապետ Ղազարյանը մեկնեց Մոսկվա, այնտեղից Կուլբիշև, նշանակվեց Ռբրիգադայի շտաբի պետ, հետագայում բրիգադայի հրամանատար, որը նոր էր կազ-

մակերպվել սիրելիքի մարտիկներին: 1942 թ. սկզբից այդ բրիգադան գործում էր Բըրյանսկի ռազմաճակատում, որտեղ ստեղծված էր թշնամու համար անմատչելի պաշտպանության գիծ: Փոխգնդապետ Ղազարյանի մարտիկները արիաբար պաշտպանեցին այդ բնագիծը ամիսներ շարունակ: Ու բանակի Ռազմական խորհուրդը երկու անգամ գրավոր շնորհակալություն հայտնեց ընկեր Ղազարյանին նրա բրիգադայի հաջող գործողությունների համար:

1942 թվի սեպտեմբերին «Իզվեստիա»-յի ռազմական թղթակիցն այցելեց ընկեր Ղազարյանի զորամասը և գործող բանակից գրեց մի հոդված «Առաջավոր խրամատում» վերնագրով, որ սկսվում է այսպես.

«Մենք չենք հանդուրժում անդորրությունը, դա հազստացնում է և դա վտանգավոր է»,—ասում է գնդապետ Ղազարյանը:

«Ընկեր Ղազարյանի հրամանատարությամբ գործող զորամասում օր չի անցնում, որ մարտիկները չանհանգստացնեն թշնա-

մուն: Մերթ հետախուզություն են կազմակերպում, մերթ «լեզու» բռնում, կամ թե մի խումբ կտրիճներ հանկարծակի գրոհում են հակառակորդի խրամատներին, բլինդաժներին կամ դզօտներին վրա: Իրա համար էլ այդ զորամասը որպես օրինակ են բերում մյուսների համար: Նրա ամբողջ անձնակազմին հայտնված է շնորհակալություն: Համեմատաբար խաղաղ այդ ճակատամասում զորամասը, շնորհիվ իր «անհանգիստ» բնավորության, սեպտեմբեր ամսի 15 օրվա ընթացքում ոչնչացրել է 500 գերմանացի, գրավել է հարուստ ավար, ձեռք է գցել կարևոր փաստաթղթեր, ըստ որում ինքը համարյա ոչ մի կորուստ չի կրել»:

Գնդապետ Ղազարյանի այդ «անհանգիստ» մարտիկները շատ անախորժություններ են պատճառել հիտլերյան ավազակներին նույնիսկ այն օրերին, երբ Սովետական Ինֆորմբյուրոն հազորդում էր, թե այսինչ ճակատում առանձին փոփոխություն տեղի չի ունեցել: «Իզվեստիա»-յի հատուկ թղթակիցը զրուցեց զորամասի

հրամանատարի և շարքային մարտիկների հետ: Նրանք պատմեցին հերոսական գործերի, խիզախ ու հանդուգն ելույթների, հետախուզական հնարամիտ և ճարպիկ արշավանքների մասին: Ռուս մեծ ժողովրդի քաջարի որդիներից մեկը—սիրելիցի շարքային մի մարտիկ, արտահայտելով ամբողջ զորամասի անսասան վճռականությունը, անխախտ համոզմունքով ասաց թղթակցին.

—Ո՛չ, գերմանացու ուժից վեր է հանել մեզ այս բնագծից:

\* \* \*

Ռազմական այդ հաջող գործողությունների համար Պաշտպանության ժողկոմի հրամանով գնդապետ Ղազարյանի բրիգադան վերածվեց դիվիզիայի և 1942 թվի հոկտեմբերին նա նշանակվեց դիվիզիայի հրամանատար: Դա 74-րդ պանծալի դիվիզիան էր, որի մասին նշեց մեծ Ստալինը Դեանայի ճակատամարտի ժամանակ:

\* \* \*

Ռազմաճակատի հարաբերական «անգորբրությունը» երկար չտևեց: Սկսվեց

սովետական զորքերի 1942—43 թ. թ. ձմեռային կամպանիան: Կարմիր Բանակը հարձակման անցավ լայն ճակատով: Այդ մարտերում գնդապետ Ղազարյանի ղեկիղիան ծավալեց մարտական իր բոլոր ունակությունները, իսկ հրամանատարը ցույց տվեց իր հմտությունն ու արհուլթյունը որպես ռազմական խոշոր միավորման հրամանատար: 1942—43 թ. թ. ձմեռային կամպանիայի ընթացքում միայն Ղազարյանի ղեկիղիան ազատագրեց ավելի քան հազար բնակավայր, որոնց թվում չորս քաղաք—Մալոարխանգելսկի, Կրոմա և այլն: 1943 թվի փետրվարի 14-ին նա պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով, իսկ 1943 թվի փետրվարի 22-ին ՍՍՌՄ Ժողկոմսովետի որոշմամբ ընկեր Անդրանիկ Ղազարյանին շնորհվեց Կարմիր Բանակի գեներալ-մայորի կոչում:

1943 թվի ապրիլի 15 թվակիր նամակով գեներալ-մայոր Ա. Ղազարյանը գրում է իր մոտիկ ազգականին. «Մինչև հիմա ձեզանից թաքցրել եմ, հիմա գրում եմ, որ

նորից երկու տեղից վերաժողոված հմ  
եղել...»:

Երկու ամիս հետո գրած նամակում կար-  
դում ենք. «Ես գտնվում հմ աշնտեղ, որ-  
տեղ հուլիսի 5-ին սկսվեցին վճռական մար-  
տերը»:

Օրյոլի և Բելգորոդի համար մղված հե-  
րոսական մարտերի օրերն էին: Կարմիր Բա-  
նակը ստալինյան ստրատեգիական հան-  
ճարեղ պլանով խորտակեց գերմանացիներին  
այդ հզոր պլացդարմը:

Հիտլերականների ամառային հարձա-  
կումը խեղդվեց իրենց սեփական արյան  
մեջ: Օրյոլի այդ նշանավոր ճակատամար-  
տի ժամանակ գններալ-մայոր Ղազարյանի  
դիվիզիան գրավում էր այդ քաղաքի հարա-  
վում անկյունաձև երկու կիլոմետրանոց  
մի նեղ ճակատամաս: Թշնամին այդ փոքր  
տարածության վրա նետեց ավելի քան  
150 տանկ: Մեծ կորուստների գնով հակա-  
ռակորդին հաջողվեց ձեղքել սովետական  
պաշտպանության այդ գիծը մոտ մեկ կի-  
լոմետր խորությամբ: Սակայն Ղազարյանի

սպաները և մարտիկները կռվեցին առյուծ-  
 ների նման: Մի օրում նրանք 13 անգամ  
 հակազրոհի անցան: Գեներալն անձամբ զե-  
 կավարում էր այդ գործողությունները: Վեց  
 օր ու գիշեր մերոնք ոչ քնում էին, ոչ ուտում:  
 Թշնամու հարձակումը կասեցվեց: Յոթերորդ  
 օրն ընկեր Ղազարյանը հեռադիտակով տե-  
 սավ, որ թշնամին խրամատավորվում է,  
 նշանակում է նա անցնում է պաշտպա-  
 նության: «Իմ ուրախությանը չափ չկար»,—  
 խոստովանում է սովետական գեներալը:  
 Սակայն դրանով չէր կարելի հանգստանալ:  
 Չպետք է թույլ տալ, որ թշնամին խրա-  
 մատավորվի, ամրացնի իր դիրքերը: Սովե-  
 տական բարձր հրամանատարությունը կար-  
 գադրեց 15 բոպեից անցնել ընդհանուր հար-  
 ձակման: Թշնամին կատաղի դիմադրու-  
 թյուն էր ցույց տալիս, սակայն ոչ մի բան  
 չէր կարող դիմանալ սովետական քաջերի  
 միահամուռ, սրընթաց զրոհին: Հիտլերա-  
 կանների համառ դիմադրությունն ընկճվեց  
 և մի քանի ժամվա ընթացքում վերականգ-  
 նըվեց 6 օր առաջ եղած դրությունը, թըշ-

նամին ետ շարտվեց դեպի իր ելման դիրքերը:

Այնուհետև հաջողութեամբ շարունակվեց սովետական զորքերի հարձակումը: Ազատագրվեցին Օբյուլ և Բելգորոզ քաղաքները: Այդ ճակատամարտերում հսկայական դեր խաղաց մեր հուշակալուր հրետանին, որի հուժկու հարվածների տակ ջարդ ու փշուր էին լինում ֆաշիստների գովաբանած «վազրերն» ու «հովազները»:

«Առհասարակ չափազանցված է այդ «վազր» կոչված տանկերի նշանակութունը, — ասում է գեներալ-մայոր Ղազարյանը, — դրանք միայն հեռվից են սարսափելի թվում սխալ պատկերացման կամ վախկոտների առասպելական պատմութունների շնորհիվ: Սովետական գիտութունը գտել է այդ տիպի տանկերը շարքից հանելու էֆեկտիվ հրետանային միջոց՝ ռազմական մի գաղտնիք, որն իմանալու համար շատ բան կտար նենգ ու ստոր թշնամին: Բացի այդ՝ մեր մարտիկները հաճախ ձեռնամարտի են բռնվում այդ զրահապատ հրեշների դեմ և

միայն նռնակներով մաքրում նրանց հաշիվը, որովհետև մոտիկից այդ տանկերը սարսափելի չեն»:

Օրյուլի ճակատամարտը պատմության մեջ կմնա որպես սովետական զենքի մեծագույն հաղթանակներից մեկը՝ ընկեր Ստալինի ստրատեգիական հանճարեղ պլանի փայլուն իրագործումը:

Այդ մարտերում գեներալ-մայոր Ղազարյանը նորից վիրավորվեց, բայց նրա կուրծքը զարդարվեց Կարմիր Իրոշի մարտական երկրորդ շքանշանով: Նա իր ազգականներին ոչինչ չի գրում այդ վիթխարի ճակատամարտի մասին, միայն հակիրճ խոսքերով հաղորդում է. «Ես նորից վիրավորվեցի, զրկվեցի ձախ աչքից...»:

Երկու ամիս նա ստիպված էր պառկել հոսպիտալում. «Ես նորից երկու ամիս հիվանդանոցումն էի, հիմա լավ եմ և գտնվում եմ գործող բանակում... Գործերը լավ են գնում»: Այս համառոտ բացիկին հաջորդում է մի ուրիշը. «Աչքս բոլորովին լավացել է, հիմա էլ աջ ձեռքս է թեթև վիրա-

վորված, բայց ոչինչ, անցնում է, ինչպես  
տեսնում ես, անգամ գրում եմ, թեև մի  
քիչ ցավ եմ զգում:

Սակայն հանգստի մասին ոչ մի խոսք:  
Մարտական գեներալը, հայ ժողովրդի հա-  
վատարիմ և քաջարի զավակը, իր պանծալի  
զորամասի՝ 74-րդ հրաձգային դիվիզիայի  
գլուխն անցած՝ շարունակում էր առաջ  
շարժվել դեպի արևմուտք:

\* \* \*

Գեներալ-մայոր Ղազարյանի դիվիզիան  
առաջադրանք ստացավ թշնամու համար  
հանկարծակի, սրընթաց գրոհով անցնել  
Դեանա գետը: Երբ սովետական զորամա-  
սերը մոտեցան Դեանային, զգացին, թե  
նրքան դժվար է առանց տեխնիկական  
հարմարությունների — պոնտոնների, կա-  
մուրջների և այլ միջոցների՝ անցնել այդ  
բավական լայն գետը: Գեներալի օգնական-  
ներից ոմանք ասում էին, որ այդ համարյա  
տնհնար է: Սակայն ընկեր Ղազարյանը  
վճռել էր, ինչ գնով էլ լինի, կատարել

մարտական հրաժանը: Նա հրամայեց իր  
 գնդերից մեկին բարձրանալ գետի ուղղու-  
 թյամբ դեպի հյուսիս և գրավել հակառա-  
 կորդի ուշադրությունը: Փոխադրական բո-  
 լոր միջոցները տրամադրվեցին այդ գնդին,  
 որը մոտ 20 կիլոմետր դեպի հյուսիս շարժ-  
 վելով՝ իր վրա կենտրոնացրեց թշնամու  
 ուժերը: Այդ ժամահալ գեներալ-մայոր Ղա-  
 դարյանը պրիմիտիվ միջոցներով — ձկնոր-  
 սական նավակներով և այլն մի գունդ դոր-  
 քով անցավ գետը խավարի քողով ծածկ-  
 ված: Հակառակորդը նկատելով այդ՝ ան-  
 ցավ հակադրոհի: Գետի արևմտյան ափին  
 գտնվում էր ուկրաինական մի մեծ գյուղ:  
 Անհրաժեշտ էր հակառակորդին դուրս քշել  
 այդ հենակետից: Ընկեր Ղադարյանը, ձի  
 նստած, անձամբ ղեկավարում էր իր մար-  
 տիկների գործողությունները: Մի գումար-  
 տակի ուժերով նա գրոհեց այդ գյուղի վրա  
 և գրավեց նրա կեսը, որը դարձավ հենա-  
 րան: Հրետանի չունենալը դժվարացնում էր  
 սովետական մարտիկների գործը: Հիտլերա-  
 կանները, ամրացած գյուղի քարաշեն եկե-

դեցում, գնդացրային ուժեղ կրակ էին վարում: Գններալի տակի ձին սպանվեց, իսկ օրդինարեցը վիրավորվեց: Պետք էր թշնամուն դուրս քշել եկեղեցուց: Կես գիշերին 16 կարմիր բանակայիններ կարողացան ներս թափանցել եկեղեցին և ոչնչացնել այնտեղ բուն դրած հիալերականներին: Ութ օր անընդհատ սովետական քաջարի մարտիկները մնացին եկեղեցում, կտրված մեր զորքերից, մինչև որ մերոնք գրավեցին ամբողջ գյուղը: Գններալը հեռադիտակով հետևում էր սովիետական խիզախների այդ անհավասար պայքարին, որը հուզիչ է իր դրամատիկ վեհաթյամբ: Երբ մերոնք մտան եկեղեցին, տեսան, որ 16 հոգուց կենդանի են մնացել միայն երկուսը. մյուսներն ընկել էին հերոսի մահով:

Գններալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը պատվով կատարեց մարտական առաջադրանքը. ստեղծված էր ամուր պլացդարմ Դեսնայի արևմտյան ափին, հնարավորութուն տալով սովետական ավելի մեծ զորա-

մասերի այդ ճակատամասում հաջողութեամբ  
անցնել Դեանա գետը:

N բանակում տարածվեց Ղազարյանի  
մարտիկների քաջագործութեան համբավը:  
Բանակի Ռադմական խորհուրդը բաց թողեց  
հատուկ թուղթիկ, ուղղված մարտիկներին  
և սպաներին. բերում ենք մի քաղվածք  
այդ մարտական թերթիկից.

«Առաջ դեպի արևմուտք.

Համարձակ հաղթահարեցեք Չրային  
արգելքները ինչպես Ղազարյանի և Գուդ-  
զի քաջարի մարտիկները...

Մարտական բարեկամներ.

Կարմիր դյուցազունների հուժկու հար-  
վածների տակ ընկավ թշնամու ևս մի ամ-  
բոց, որի վրա նա մեծ հույսեր էր դրել:  
Մեր զորքերը զրոհով անցան Դեանա գետը  
և գրավեցին Նովգորոդ-Սևերսկի մարզային  
քաղաքը: Դեանա գետը սրընթաց և վճռա-  
կան թափով անցնելու օրինակներ ցույց  
տվին ընկ. ընկ. Ղազարյանի և Գուդզի  
մարտիկներն ու սպաները. նրանց գերա-  
զանց գործողութունները նշեց իր հրամա-

նում Գերագույն Գլխավոր Հրամանատար,  
Սովետական Միության Մարշալ ընկեր  
Ստալինը...

Անցեք գետերը նույնպես արագ և հմուտ,  
ինչպես ընկ. ընկ. Ղազարյանի և Գուզղի  
պանծալի ռազմիկները...

Ընկերներ.

Մեր առջևն է մեր պարծանքը — Դնեպ-  
րը... Բանակի Ռազմական խորհուրդը շնոր-  
հավորում է ընկ. ընկ. Ղազարյանի և  
Գուզղի զորամասերի քաջարի ռազմիկներին  
Դեանայի վրա տարած փայլուն հաղթանակի  
առթիվ և կոչ է անում մեր բանակի մար-  
տիկներին ու սպաներին հմուտ և վճռական  
կերպով հաղթահարել ջրային խոչընդոտները,  
ջախջախել թշնամուն և մաքրել մեր սքան-  
չելի հայրենիքը հիտլերյան հորդաներից:

Ավելի ուժեղ գրոհը,

Ավելի հուժկու հարվածը թշնամուն:

Բանակի Ռազմխորհուրդ:

Սովետական ռազմիկի և հայրենասերի  
համար չկա ավելի բարձր պատիվ, քան  
արժանանալ մեր մեծ զորավարի, Սովետա-

կան Միության Մարշալ ընկեր Ստալինի շնորհակալությանը բովանդակ հայրենիքի անունից: Գիներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանն արժանացավ այդ բարձր պատվին: Նա ազնվությամբ և քաջությամբ կատարեց հայ ժողովրդի նվիրական պատվերը—չխնայել իր արյունը և իր կյանքը Սովետական հայրենիքի ազատության մեծ գործի համար:

Մեծ Ստալինը 1943 թվի սեպտեմբերի 16-ի իր պատմական հրամանով, սովետական այլ զորավարների շարքում, գններալ-մայոր Ա. Ղազարյանին ներկայացրեց Սուվորովի շքանշանով պարգևատրվելու, նույն օրը ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով իրագործվեց Գերագույն Գլխավոր Հրամանատարի առաջադրանքը:

Դեռնայի և Դնեպրի միջև ընկած տարածությունը թատերաբեմ դարձավ կատաղի մարտերի: Սովետական զորքերը Դեռնայի արևմտյան ափին ստեղծեցին հզոր սլաքադարմ: Գետն անցած ծանր հրետանու և

տանկերի օգնութեամբ հաջողից թշնամուց  
մաքրել այդ տարածութիւնը և խորտակել  
գերմանական ամբողջութիւնները: Այդ մար-  
տերի ժամանակ գերմանական մի արկի  
պայթիւթիւնից համարյա կուրացավ գեներալ-  
մայոր Ղաղարյանի ձախ աչքը. ութ-ինը  
օր նա ոչինչ չէր տեսնում, սակայն դիվի-  
զիայի հրամանատարը շարունակում էր  
դեկավարել իր մարտիկներին հարձակումը:  
Մոտ էր ուկրաինական մեծ գետը — Դնեպրը:

Գեներալ-մայոր Ղաղարյանն առաջա-  
դրանք ստացավ հաղթահարել ջրային այդ  
մեծ արգելքը: Նրա դիվիզիայի ճակատա-  
մասուժ առաջինը Դնեպրն անցան 380  
սովետական խիզախներ, որոնք իրենց դի-  
վիզիայի փորձված և քաջ հրամանատարի  
անմիջական դեկավարութեամբ, արհամար-  
հելով վտանգն ու մահը, նետվեցին պատ-  
մական գետի ալիքների վրա, օգտագոր-  
ծելով գետանցի ամենահասարակ միջոց-  
ները: Առաջինն անցնող մարտիկը ջրային  
այդ հսկա արգելքը հաղթահարեց խոտով  
լցված պլաշչ-պալատկայով, մյուսներն օգ-

տագործեցին գերաններ, գյուղական խրճիթ-  
ներինց պոկված դռներ. ինքը գեներալն ան-  
ցավ ձկնորսական փոքրիկ նավակով, որը  
տրամազբել էր նրան Չերնիգովի մարզի  
կոլխոզի նախագահ Եմելյան Իվանովը: Գե-  
ներալի հետ էին նրա օգնական գնդապետ  
Կուզնեցովը, փոխգնդապետ Ստաշեկը, մա-  
յրը Կոչլովը: Երբ գիշերով անցան մեծ  
գետը, մարտիկներն իսկույն հանպատրաս-  
տից բլինգաժներ շինեցին հրամանատար-  
ների համար, իսկ իրենք խրամատավոր-  
վեցին: Թշնամին չէր սպասում նման հան-  
դուհն մի քայլի: Երբ նա ուշքի եկավ, մեծ  
ուժեք կենտրոնացրեց սովետական այդ մի  
բուռը քաջերի դեմ և անցավ գրոհի: Բարե-  
բախտաբար այդ ճակատամասում գերմա-  
նացիները տանկեր չուներին: Երկու օր ան-  
ընդհատ, գիշեր ու ցերեկ, գեներալ Ղազա-  
րյանի մարտիկները հերոսաբար դիմադրեցին  
հազարից ավելի հիտլերականների կատաղի  
գրոհներին, պաշտպանելով ընդամենը 300  
մետր տարածություն Դնեպրի աջ ափին:  
Ժամ առ ժամ նոսրանում էին սովետական

քաջերի շարքերը, բայց նրանք վճռել էին  
 իրենց կյանքի գնով չզիջել թշնամուն Ուկ-  
 րախնայի սրբազան գետի արևմտյան ափին  
 իրենց նվաճած առաջին փոքրիկ պլացդար-  
 մը: Հայրենիքը նրանց առաջ դրել էր պատ-  
 վաժոր մի խնդիր, որ նրանք պետք է կա-  
 տարեին իրենց արյան գնով: Երրորդ օրը  
 օգնության հասան սովետական թարմ զո-  
 րամասեր և վերջնականապես ամբացրին  
 ձեռք բերված պլացդարմը: 380 քաջարի  
 ռազմիկներից կենդանի էին մնացել միայն  
 48 մարդ, ինքը՝ գեներալը վիրավորված էր  
 աջ ձեռքից—դա նրա յոթերորդ վերքն էր  
 Հայրենական պատերազմի ընթացքում,  
 բայց մարտական գեներալը շարունակեց  
 ղեկավարել իր մի բուռն քաջերի հերոսա-  
 կան մարտը մինչև վերջը:

Այդ ճակատամասում առաջինը Դենպրն  
 անցած 48 քաջերը, որոնց թվում նաև հայ  
 ժողովրդի պանծալի պավակ գեներալ-մայոր  
 Անդրանիկ Ղազարյանը, արժանացան Սովե-  
 տական Միության Հերոսի բարձր կոչմանը:

Դենպրն անցումը կմնա պատմության

մեջ որպես սովետական զորքերի աննախ-  
 ընթաց մի սխրագործություն: Հիտլերական  
 «ռազմագետները» երբևք չէին սպասում,  
 որ սովետական զորքերը համարձակություն  
 կունենան առանց գետանցի տեխնիկական  
 անհրաժեշտ միջոցների—սլոնտոնների և  
 կամուրջների—անցնելու Եվրոպայի ամենա-  
 լայն գետերից մեկը: Նրանք ենթադրում  
 էին թերևս, թե սովետական հրամանատա-  
 րությունը կսպասի մինչև ձմեռ, երբ Դնեպ-  
 րը կսառչի, սակայն այս անգամ էլ գեր-  
 մանացիների հաշիվները սխալ դուրս եկան:  
 Նրանց հաշիվների մեջ չէր մտնում մեր  
 մարտիկների անօրինակ տոկունությունը,  
 անձնվիրությունը և հայրենասիրական խան-  
 դավառությունը:

\* \* \*

Դնեպրն անցնելուց հետո գնհերալմայոր  
 Ղազարյանի գիվիդիան շարունակեց իր  
 մարտական հաջող գործողությունները: Կա-  
 տաղի մարտեր էին մղվում անտառապատ  
 մի վայրում ամբողջ 15—20 օր անընդհատ:  
 Թշնամին փորձում էր ամեն կերպ կասեց-

նել մեր զորքերի առաջխաղացումը: Նրան հաջողվեց հայտաբերել Ղազարյանի դիվիզիայի շտաբի տեղավորման վայրը և ուժակոծել այն: Արկերն ընկնում էին շատ մոտիկ, նրանցից մի քանիսը պայթեցին հենց հրամանատարական բլինդաժի վրա: Այդ ժամանակ գեներալ-մայոր Ղազարյանը հեռախոսով խոսում էր գնդերից մեկի հրամանատարի հետ. նա արդեն երկու անգամ կանտուզիա էր ստացել ռումբի պայթյուններից: Լավեց էլի մի ուժեղ պայթյուն: Գեներալը նկատեց, որ հեռախոսի լսափողի մեջ խոսող ձայնը հանկարծ կտրվեց: Շտաբի պետ փոխգնդապետ Գիզադուլինը, որ նստած էր բլինդաժում նրա կողքին, հարցրեց գեներալին, թե ինչո՞ւ նա չի պատասխանում հեռախոսով խոսող գնդի հրամանատարին: «Տեսնում եմ, որ շտաբի պետի շրթունքները շարժվում են, բայց ես ոչինչ չեմ լսում», — պատմում է ընկեր Ղազարյանը: Երբորդ կոնտուզիան խլացրել էր նրան: Սակայն սովետական գեներալը չէր ուզում թողնել իր զորքերի ղեկավարու-

թյունը, նա շարունակեց այդ դրությամբ  
երկը օր մնալ մարտական պոստում:

Չորրորդ օրը նրա առողջական վիճակը  
վատացավ. ուժեղ ցնցումից խախտվել էր  
նրա հուժկու օրգանիզմը, օրական մի քանի  
անգամ ուշաթափ էր լինում: Այլևս չէր  
կարելի թողնել նրան այդ վիճակում: Գե-  
ներալի օգնականները նրան ուժով նստեց-  
րին մեքենա: Նա համարյա չզգաց, թե  
ինչպես հասան Մոսկվա: Հոսպիտալում  
գեներալ-մայոր Անդրանիկ Ղաղարյանը  
հինգ օր շարունակ պառկեց համարյա ան-  
զգա վիճակում, այդ ամբողջ ժամանակվա  
ընթացքում նա ոչինչ չէր կերել: Էլիկարա-  
կան բուժումն օգնեց: 16-րդ օրը նա զգաց,  
որ լսողությունը քիչ-քիչ վերականգնում է:  
Սովետական Միության Հերոսի կոչում ստա-  
նալը նա իմացավ Հրամանագրի հրապարա-  
կումից մի քանի օր հետո միայն: 1943 թվի  
հոկտեմբերի 22-ին հինավուրց կրեմլի հըռ-  
չակավոր զահլիճում Անդրանիկ Ղաղարյանը  
ՄՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահու-  
թյան Նախագահի ձեռքից ստացավ Լենինի

շքանշանը և Ոսկե Աստղ մեղալը: Այդ օրը նրա կյանքի ամենանշանավոր օրն էր:

Մի ամիս Մոսկվայի հիվանդանոցում պառկելուց հետո, Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Անդրանիկ Հազարյանը ճանապարհ ընկավ դեպի Հայաստան— պատմական Երևան, որտեղ նա անց է կացրել իր կյանքի լավագույն տարիները, որտեղ նրան գրկարաց սպասում էր իր հարազատ ժողովուրդը, սպասում էին իր սիրելի ազգականներն ու բարեկամները: Նա դալիս էր Երևան անթառամ փառքով պսակված, և հայ ժողովուրդն ընդունեց նրան որպես իր պանծալի որդուն, որն արդարացրեց իրեն ծնունդ տվող ժողովրդի վստահությունը, կատարեց նրա նվիրական պատվածը, վրեժ լուծելով մեր ռիսերիմ թշնամուց, սրբորեն պահպանելով մեր քաջարի նախնիների ավանդները:

Կարմիր Բանակի շարքային համեստ մարտիկից նա հասավ սովետական գեներալի և Սովետական Միության Հերոսի պանծալի կոչմանը: Այդ փառավոր ուղին նա անցել

է ամբողջ 23 տարի աճելով ու կոփվելով հերոսական Կարմիր Բանակի և Լենինի-Ստալինի մեծ պարտիայի շարքերում: Նա պատկանում է մարտերում կոփված սովետական այն գեներալների թվին, որոնք իրենց ռազմական բարձր կոչմանն արժանացել են բացառապես իրենց տաղանդի, քաջության և արիության շնորհիվ: Հայրենական պատերազմի ահեղ մարտերում նա միշտ գտնվել է առաջավոր գծի վրա, անձամբ ղեկավարելով իր զորքերին, շատ հաճախ ահնհայտ վտանգի ենթարկելով իր կյանքը: Իր անձնական օրինակով նա ոգևորում է իր մարտիկներին, որոնք տեսնելով իրենց հրամանատարի անվեհեր սառնասրտությունը և կորովի վճռականությունը նույնիսկ ամենածանր բոլորներին, խոյացել են առաջ և փայլուն հաջողությամբ կատարել ռազմական դժվարին խընդիրներ:

\* \* \*

Սունական ղեմքի շեշտված հայկական գծերով, միջահասակ և թիկնեղ այդ զին-

վորականն աչքի է ընկնում լեռնականի  
 պարզությամբ և համեստ, ընկերական  
 բնավորությամբ: Նա սիրում է իր հայրե-  
 նիքը, իր մայրենի լեզուն, հայ ժողովրդի  
 բազմադարյան կուլտուրան և արվեստը,  
 միաժամանակ սիրելով և բարձր գնահա-  
 տելով ավագ եղբայր ուռս մեծ ժողովրդի  
 լեզուն և հարուստ կուլտուրան: Սայաթ-  
 Նովայի, Րաֆֆու, Թումանյանի, Իսահա-  
 կյանի, Կոմիտասի հետ համահավասար հա-  
 րազատ են նրան Պուշկինը, Լերմոնտովը և  
 Չայկովսկին, հայ ժողովրդական մեղեդի-  
 ների հետ միասին՝ ուսսական խմբական  
 աննման երգեցողությունը, որ այնքան  
 սքանչելի կատարում են նրա մարտիկները,  
 շահելով առաջին մրցանակը բանակային  
 մրցման մեջ:

Մանկական տարիներից նրա իղձն է  
 եղել տեսնել իր հայրենիքը սղատ ու եր-  
 ջանիկ: Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ,  
 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուս-  
 լուցիայի շնորհիվ, բազմաչարչար Հայաս-  
 տանն ազատագրվեց դարավոր ճնշումներից

և տառապանքներից: Սովետական ազատ  
ժողովուրդների ստալինյան եղբայրությունն  
այն վիճ դադարաբար է, որի վրա հիմնված  
է Սովետական Միության անասանութ-  
թյունն ու անպարտելիությունը: Այդ գաղա-  
փարի անձնվեր գինվորներից է Սովետա-  
կան Միության Հերոս, գեներալ-մայոր  
Անդրանիկ Ղաղարյանը, որն իր հարազատ  
երկրի մայրաքաղաքում և շրջաններում  
աշխատավորների հետ ունեցած հանդիպում-  
ների ժամանակ հայտարարեց.

«Ամեն մի սովետական մարտիկի և սեր-  
ժանտի, սպայի և գեներալի համար բնական  
ցանկություն է տեսնել իր ազգը, իր ժողո-  
վուրդն առաջավորների շարքում — թե՛ ուղ-  
մաճակատում և թե՛ թիկունքում: Հայ ժողո-  
վրդի գավազները ուղմաճակատում բարձր  
են պահում իրենց հայրենիքի պատիվը,  
իրենց քաջ նախնիների տրազիցիաները  
և նույնը պահանջում են թիկունքի աշխա-  
տողներից: Ամեն անգամ, երբ ես լսում էի,  
թե հայ ժողովուրդը պատվով է կատարում  
իր պարտքն ընդհանուր հայրենիքի հան-

դեպ, իմ սիրտը լցվում էր ազգային հպարտութեամբ: Երբ «Պրավդա»-յում տպագրվեց Աղինի կոլխոզնիկների նամակը, և մենք իմացանք Պաշտպանութեան Ֆոնդին նրանց հատկացրած 15 հազար վուլթ հացահատիկի մասին, հարևան գործատու հավաքվեցինք 10—12 հայ հրամանատարներ: Բոլորի գեմքերը փայլում էին ուրախութեամբ, մենք պարծենում էինք Աղինի կոլխոզնիկներով, և մեր ուս ու եզրայրական այլ գինակիցներին ասում էինք, թե բոլորս էլ աղինցիներ ենք, թեև մեր մեջ կային գլխավորապես երևանցիներ, դարբաղցիներ, զանգեզուրցիներ և այլն: Եթե այլ կերպ լիներ, հաղիվ թե մենք մեզ հայտարարելնք աղինցիներ»:

Սովետական գեներալի՝ բարեմիտ յուսուրով ասված այս խոսքերը նրա հայրենասիրութեան պարզ և անկեղծ արտահայտութեամբն է:

«Մի քանի շաբաթից ես դարձյալ կմեկնեմ ռազմաճակատ, — շարունակեց նա նույն անկեղծութեամբ և պարզութեամբ, — ինձ համարում են ջրային արգելքների հաղթահարման մասնագետ, թեպետև ես լիռնցի

եմ և լողալ չգիտեմ,—Թերևս ինձ վիճակվի  
 անցնել ավելի մեծ և լայնահուն մի գետ  
 արևմուտքում: Ես խոսք եմ տալիս իմ մեծ  
 հայրենիքին, իմ սիրելի հայ ժողովրդին, որ  
 հետևյալ հանդիպման ժամանակ ավելի  
 շատ բան կունենամ պատմելու մեր հերոս  
 մարտիկների քաջության և անձնվիրու-  
 թյան մասին և անձամբ իմ մասին: Որպես  
 հայրենիքին նվիրված ռազմիկ, իմ միակ  
 ցանկությունն է, որ օր առաջ ազատագրվի  
 մեր մեծ երկիրը գերմանական զավթիչ-  
 ներից: Մոտ է հաղթանակը, սակայն, ինչ-  
 պես ասում է մեր հանճարեղ զորավար  
 ընկեր Ստալինը, «Սովետական մարդկանց  
 վայել չէ կանգ առնել ձեռք բերվածի վրա,  
 արբենալ իրենց հաջողություններով: Հաղ-  
 թանակը կարելի է ձեռքից բաց թողնել,  
 եթե մեր շարքերում ինքնահանգստացում  
 առաջ գա»: Մեծ Ստալինի խոսքերը բո-  
 լորիս համար պետք է դառնան նշանաբան  
 գալիք անեղ մարտերին կազմ ու պատրաստ  
 լինելու համար:

«Ամեն մի հայի սրբազան պարտականու-

թյունն է, որտեղ էլ գտնվելիս լինի նա, պաշտպանել իր սիրելի հայրենիքը, նրա պատիվն ու անկախությունը, ոչինչ չխնայել նրա ազատության և անկախության համար: Մեզ համար չկա ավելի մեծ երջանկություն և պատիվ, քան պայքարել հանուն Սովետական Միության հզորության, հանուն Սովետական ազատ ժողովուրդների ստալինյան եղբայրության:

«Երբ հաղթանակից հետո Հայրենական պատերազմից տուն կվերադառնան մարտիկները, զավակները կհարցնեն իրենց հայրերին, թե ինչ են արել նրանք թշնամուն ջախջախելու համար: Ու նա, ով շատ բան կունենա պատմելու, իրեն կզգա անսահմանորեն հպարտ ու երջանիկ, մեծ հայրենիքի հանդեպ կատարած պարտքի գիտակցությամբ», — այսպես եզրափակեց իր խոսքը հայ ժողովրդի պանծալի որդի, Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը:

Академия Наук Армянской ССР

Институт Истории

Боевые подвиги сынов Армении

**В. ТЕРЗИБАШЯН**

ГЕРОЙ СОВЕТСКОГО СОЮЗА

ГЕНЕРАЛ-МАЙОР

**АНДРАНИК КАЗАРЯН**

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1944

ՎՃ 00616 Պատվեր 10. Հրատ. 213. Տիրաժ 4000.  
1,5 տպ. մամուլ, մամուլում 29720 տպ. նիշ  
Ստորագրված է տպագրության 15/VI 1944 թ.

---

ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի 1-ին տպարան, Երևան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035995

ԳԻՆԸ Յ-ՈՒՈՒՐ.  
304,

